Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2022. «Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց խորհրդատվական աջակցության կենտրոնի և ապաստարանների բարելավման ծրագիր»

2024 թվականի հունվարի 25-ին տեղի ունեցավ «Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց խորհրդատվական աջակցության կենտրոնի և ապաստարանների բարելավման ծրագրի» ավարտական արարողությունը:

Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՈԿԻ Յուտական, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի վարչության պետ Սոֆի Բոստանյանը, Կանանց աջակցության կենտրոնի գործառնությունների տնօրեն Հասմիկ Գևորգյանը, ինչպես նաև ծրագրի այլ շահագրգիռ կողմեր:

Այս ծրագիրն իրականացվել է խորհրդատվական աջակցության կենտրոնի, ինչպես նաև ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց ապաստարանների անվտանգության և կենսամիջավայրի բարելավմանը նպաստելու նպատակով՝ շենքերի որոշ հատվածների վերանորոգման և առաջին անհրաժեշտության կահույքի տրամադրման միջոցով: Արդյունքում տարեկան մոտ 300 մարդ կօգտվի ծրագրից:

Շրջայց Խորհրդատվական աջակցության կենտրոնում



Ծրագրի ներկայացում

Դեսպան Առկիի ելույթը

Վերականգնված միջանցքը